ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1111894
15-04-2024թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0004, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ,*
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Փ., 157, 24
misakmmm100@mail.ru : 37493601570

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Խնդրում եմ հայտնել, թե ներկայումս պետության կողմից ինչ ծրագրեր են իրականացվում աղետի գոտում, մասնավորապես Սպիտակ քաղաքում 1988թ. երկրաշարժի հետևանքով անհատական բնակելի տուն կորցրած, մինչև օրս աջակցության որևէ ծրագրից չօգտված անձանց համար:

Խնդրում եմ տրամադրել նաև նշված ծրագրերի իրավական հիմքերը և այն պետական մարմինների մասին տվյալները, որոնք հաշվառում են /պետք է հաշվառեն/ Սպիտակ քաղաքում 1988թ. երկրաշարժի հետևանքով անհատական բնակելի տուն կորցրած, մինչև օրս աջակցության որևէ ծրագրից չօգտված անձանց:

Խնդրում եմ նկարագրել նաև, թե նշված անձինք ինչ տեսակի աջակցություն կարող են ստանալ /բնակարանի գնման վկայագիր, դրամական աջակցություն, բնակարան և այլն/, որ պետական մարմնին և ինչ կարգով նրանք պետք է դիմեն, որպեսզի նրանց գործին ընթացք տրվի:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Digitally signed by
MARKOSYAN
MISAK
1911840045
Date: 2024.04.15
15:32:37 AMT